# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՐԱԶԵԿՄԱՆ 2-ՐԴ ՓՈՒԼԻ

**28.08.2025թ.**

2025 թվականի օգոստոսի 28-ին՝ ժամը 14:30-ին, ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի վարչական շենքում տեղի ունեցավ հանրային 2-րդ լսումը՝ Վաղարշապատ համայնքում 2025 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացի իրազեկման նպատակով:

Հանրային քննարկմանը ներկա էին Ոսկեհատ բնակավայրի վարչական շենքի աշխատակազմը և Ոսկեհատ բնակավայրի բնակիչները: Մուտքի խոսքով հանդես եկավ Վաղարշապատի համայնքապետարանի համայնքապետի օգնական Մանվել Մելիքյանը, այնուհետև խոսքը փոխանցվեց համայնքապետարանի տնտեսական ծրագրերի պատասխանատու Մարիամ Զաքարյանին, ով մանրամասն ներկայացրեց 2025 թվականի մասնակցային բյուջետավորման ողջ գործընթացը, մասնակցային բյուջետավորման մոդելի հիմնական սկզբունքները, համայնքապետարանի կայքում գրանցման և քվեարկության գործընթացը:

Հանդիպման ընթացքում տեսասահիկով ցույց տրվեց առաջարկների ներկայացման հայտի օրինակելի ձևը և ներկայացվեց այն բոլոր չափանիշները, որոնք պետք է պահպանել առաջարկը ներկայացնելիս: Մանրամասն ցույց տրվեց կայքում ողջ գործընթացի ապահովման համար հասանելի բաժինները և գրանցման ընթացակարգերը, ներկայացվեցին ժամկետները:

Հայտարարվեց, որ քվեարկության փուլը կմեկնարկի շուտով:

Ոսկեհատ բնակավայրի բնակիչները փոխանակվեցին իրենց առաջարկներով և մեծ ակտիվություն ցուցաբերեցին քննարկման ընթացքում:

Հանձնաժողովի նախագահ՝ Մանվել Մելիքյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Մարիամ Զաքարյան